ինչպէս իրեն ուղղուած նամակներէն յայտնի է։

Աղանեանց (անդ, էջ 852) Յարութիւն Արքեպ.ի մասին կը գրէ ի ծանօթութեան. "Այս Յարութիւն Վ.ը (Բասենցի) Կ.Պոլսի եւ շրջակայից Նուիրակութեան գործը աւարտելուց յետոյ Պրուսայի առաջնորդ կարգուեցաւ. այնտեղից գնաց Վենետիկ եւ Տրիեստ, տանելով իւր հետ Ս. Աթոռի արգիւնքները, ուստի Սիմէոն Կաթողիկոսը մի թղթով դիմեց տեղական կառավարութեան, որի համաձայն վերջինս ստանալով նորանից աթոռապատկան բոլոր դրամները՝ Ս. Էջմիածին ուղարկեց. իսկ իրան՝ Յարութիւն Վ.ին զրկելով եպիսկոպոսական պատուից՝ հաւասարեց արեղաներին եւ նոցա պէս ոռճիկ էր տալիս արքունիքից, մինչեւ որ փոքր ժամանակից յետոյ վախճանեցաւ այնտեղ (ժամանակագր.)։" Մեր ընթերցողներուն յայտնի է որ Յարութիւն Պրուսա էր 1756—9, իսկ նուիրակութիւնը անկէ ետքը վերջացուց (1763—1767). մինչեւ 1781 Կ.Պոլիս էր Յարութիւն Արքեպ., որ միջոցին Սիմէոն Կաթողիկոսն ինչո՞ւ չպահանջեց "Ս. Աթոռի արգիւնքը", եւ ի՞նչպէս կարողացաւ Սիմէոն իւր իսկ մահուընէն ետեւ († 26 Յուլ. 1780) հաղիւ 1781ի վերջերը Թրիեստ հասնող Յարութիւնէն գանձել պահանջքները։ Եւ՞ր լսուած է որ Եւրոպա կաթողիկէ կառավարութիւն մը՝ "տավիղի" մը պատճառաւ եպիսկոպոսական պատուէ զրկած ըլլայ կամ՝ զրկելու իշխանութիւն ունեցած ըլլայ։ Դժբախտաբար կա-